սէ։ սոքա եդեալ են 'ի մսի առնուլ 'ի ձէնջ զ500 քսակն և չկատարել զգործն ձեր։ զի Յոյնք 'ի ձեռն տրոց դարձուցեալ են զգործն 'ի կողմն իւրեանց և ես վասն այսր կռուեցայ ընդ Բդեշխին եւ ընդ երկրորդին՝ և մեկնեցայ իսկ 'ի պալատէն։ զկնի աւուրց ինչ դիմել 'ի Կոստանդինուպօլիս, և անդ զոր ինչ արժանն է արարից։ զի երկուս հրամանագիրս ետ սակս գործադրութեան հրովարտակին, և ինձ առանձին պատուիրեաց կատարել զխնդիր Բեթղեհէմի և Աստուածածնի, եթէ տայցեն ինձ այսքան, այժմ մասն ինչ եւս յաւելիք դուք 'ի վերայ։ այլ նորա չկատարեալ զգործն, դարձաւ 'ի կողմն Յունաց ընդդէմ հրամանի Արքային։ և թէ ո՛վ խառնակեալ չփոթեաց զգործն։ նա տացէ պատասխանի։ Եւ յաղաչել Վարդապետաց լինիլ միջնորդ առ Բեահէայն։ նա հրաժարեալ ասէ՝ 'ի կոչել նորա օգնեմ ձեզ իբրեւ բարեկամ։ Եւ գնացին անտի առ Բեահէայն, և տեսին զթարգմանն Յունաց 'ի սենեակ Հըրէին։ ողջունեալ նասան, և բերեալ Հրէին զգրեանս ետ ցթարգմանն, և նորա առեալ ուրախութեամբ մեկնեցաւ։ Եւ մտեալ Վարդապետաց առ Բեահէայն ազաչէին զնա, և նա ասէ չիք հնար այդմ, այժմ ընդ Հրէին աղաչեցաք զԲդեշխն, ոչ լուաւ, և 'ի կրկնել նոցա զաղաչանս՝ բարկացեալ՝ զառաւելն խնդրէր, եւ ոչ մատուցանէր ունկն բանից նոցա։ և յերկարիլն վերատին առաքեաց զՀրէայն առ Բդեշխն, եւ սա դարձեալ եբեր զայս պատասխանի, 50 քսակն շնորհեալ, զ500 հատուցանել այժմ, և ոչ նեղէր նոցա գրել յԵրուսաղէմ։ Նեղեալ ասէ Վարդապետաց՝ ասեն ցՀրէայն, ո՞ր աղագաւ պահանջէ 'ի մէնջ Բդեշխն զայսքան դրամս։ մինչդեռ ըստ կամայ Յունաց ետ զամենայն գրեանս, եթէ կամի տուգանել զմեզ՝ ցուցցէ զյանցանս մեր։ զի հրամանաւ նորին եկեալ եմք։ Եւ նա ասէ՝ Յոյնք 'ի ձեռն բաղմագումար տրոց առին զերկուս հրամանագիրս վասն Բեթղեհէմի եւ Աստուածածնի մնալ ըստ առաջին կերպին, և չթողուլ Հայոց առնել ինչ մինչ ցգալուստ նոր հրամանի, եւ գիր մի եւս առանձին առ Քաղաքապետն Երուսաղէմի լինիլ պաշտպան Յունաց և գործոց նոցին զի մի նեղեսցին յումեքէ։ բաց յայսցանէ խոստացան բաղում ինչ վասն քակելոյ զիւղաբերից սեղանն